

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ ԼՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Գրեց՝ Յ. ձ. ՄԻՐՈՒՆԻ

ՀԱՅ ՏՈՀՄԻԿ ԱՐՈՒԵՍՏԸ

ԲԱՅՅ մի՞թէ հեւլէն ողբերգութիւնները ուղերասաններն են միայն, որ կազմած են հայ հին թատրոնը: Հայ ժողովուրդը չէ՞ ունեցած իր տոհմիկ արուեստը:

Այս հարցումին դրական կամ ժխտական պատասխան տալ մէկէն՝ անշուշտ դժուար է: Ազգային թատրոն գոնէ այն առումով, ինչպէս որ գոյութիւն ունեցած է Աթէնքի մէջ օրինակի համար, անկարելի է անշուշտ: Բայց թատրոնը առնելով իր սկզբնական նշանակութեանը մէջ, այսինքն՝ հրապարակային ցուցադրութիւնը աստուածներու եւ դիւցազուններու փառքը պատմող դրուագներու՝ խօսքով, երգով կամ ձեւերով, հայերն ալ ունեցած են իրենց թատերական արուեստը՝ բնատուրով դիմադրելով:

Դժբախտաբար, այն քաղաքական դժբախտ պայմանները, որոնց մէջ ապրեցաւ հայ ժողովուրդը շատ հին դարերէ ի վեր, եւ մանաւանդ բարբարոսներու թաթն ու կրունկը, որ անպակաս եղան հայ հողին վրայէն, մեզմէ խեցին տարին մեր անցեալը պատմող շատ մը փաստեր, ու յաճախ աւերակներն իսկ զլացան մեզի: Բայց մեր հին կենցաղէն մինչեւ մեզի հասած դոյզն հեռքերն անգամ, — երգի մը պատուը, ակնարկութիւն մը հայ կամ օտար մատենագիրներու մէջ, աւերակի մը մէջէն փաստի նշոյլ մը, — բաւական են գոնէ աղօտ լոյս մը պտտցնելու դարերու խաւարին ընդմէջէն: Բաւական են անոնք մեր ապրած հին լուսաւոր վայրկեաններուն վկայութիւնը բերելու:

Բայց դեռ աւելին հասած է մեզի: Մեզ հասած են բեկորները նոյն իսկ բեմական ստեղծագործութեանց: Քիչ մը յանդուգն թուի դուցէ մեզի հասնող այդ նմոյշները բեմական արուեստին կապելու մեր այս փորձը: Բայց քիչ մը պաղարիւնութեամբ դժուար պիտի չըլ-

լայ մեր համոզումին դալ յանդիւ: Այո՛, բեմական արուեստի տեսակէտով պէտք է մօտենալ այդ նմուշներուն, որոնք ծանօթ են մեզի «Գողթան Երգեր» անունով:

Ի՞նչ էին ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐԸ

Հայ դրականութեան պատմութիւնը կ'ըսէ, թէ Գողթան երգերը հայոց հեթանոսութեան շրջանէն մնացած երգեր էին, ու այդպէս կոչուած, որովհետեւ ընդհանրապէս կ'երգուէին Գողթան գինեւէտ եւ բարերբ դաւառին երգիչներուն կողմէ: Այդ երգերը իրենց գոյութիւնը պահեցին հայոց քրիստոնեայ դառնալէն յետոյ ալ, մինչեւ հինգերորդ, վեցերորդ եւ եօթներորդ, նոյնիսկ մինչեւ ԺԱ դար:

Արգարեւ Բիւզանդ Փաւստոս՝ մեղադրելով Գ. դարու հայերը իրենց մէջ յամեցող հեթանոսական բարքերուն համար, կ'ըսէ, թէ դեռ կը սիրէին իրենց առասպելներն ու վիպասանութեանց երգերը, կը հաւատային անոնց ու կը յարատեւէին անոնց մէջ:

Նղիշէ, նկարագրելով Վարդանանց պատրագմը (Յ. դար) եւ խօսելով Վասակի մասին, կ'ըսէ, թէ ան կը շարունակէր պահպանել հեթանոսական երգերը:

Սորենացի, հեղինակ է. կամ Բ. դարու, շարագրելու ատեն իր Հայոց Պատմութիւնը, կ'օգտուի հին առասպելներէն ու երգերէն, որոնք մինչեւ իր օրով կային, կուտայ ոմանց պատճէնը եւ ոմանց ալ իմաստը: Արտաշէսի մասին խօսելով կ'ըսէ, օրինակի համար, թէ անոր զործերէն շատերը ծանօթ են վիպասանական երգերէն, որոնք կը պատմուին Գողթան գաւառին մէջ: Ուրիշ առթիւ մը կ'ըսէ դարձեալ, թէ իր պատմագրած դէպքերը կ'ապացուցուին նաեւ այն երգերով, զորս պահած են Գողթան գինեւէտ գաւառին կողմի մարդիկը:

Գրիգոր Մազիստրոս, որ ապրած է ԺԱ.